ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 0008
08 JAN 2021
Կից ☐ Նշում

«30» դեկտեմբեր 2020թ. No 4706 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103204620 առ 25.12.2020թ փորձագիտական եզրակացությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 2 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի, բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրիելյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

Լսեց. 08.01.21. J. 10[15] ֆ

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

30.12.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2020թ. դեկտեմբերի 30-ի N 4706 – Ա հրամանի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ (ՆՈՐ ՑՈՒՑՈՒՄ)

Հ/Հ	Առևտրային անվանում	միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ	դեղաձև	դեղաչափը և թողարկման ձև (փաթեթավորում)	արտադրող ֆիրմա	երկիր	գրանցման հավաստագրի իրավատեր	երկիր	բացթողման կարգ	եզրակացության համար և ամսաթիվ
.	Ուտրոժեստան	պրոգեստերոն	դեղապատիճներ փափուկ	100մգ; (28/2x14/) բլիստերում	Սինդեա Ֆարմա ՍԼ, Պոլիգոնո Ինդուստրիալ Էմիլիանո Ռեվիլա Սանզ, Ավենիդա դե Ագրեդա, 31, Օլվեգա 42110(Սորիա)	Իսպանիա	Բեզինս Հելթքեյր ՍԱ, Ավենյու Լուիս 287, 1050 Բրյուսել	Բելգիա	Դ	16160/1 25.12.2020
?.	Ուտրոժեստան	պրոգեստերոն	դեղապատիճներ փափուկ	200մգ; (14/2x7/) բլիստերում	Սինդեա Ֆարմա ՍԼ, Պոլիգոնո Ինդուստրիալ Էմիլիանո Ռեվիլա Սանզ, Ավենիդա դե Ագրեդա, 31, Օլվեգա 42110(Սորիա)	Իսպանիա	Բեզինս Հելթքեյր ՍԱ, Ավենյու Լուիս 287, 1050 Բրյուսել	Բելգիա	Դ	16159/1 25.12.2020